Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն Անուշ Թանյան

Հաստատվել է 5-դհ ավագ մասերի հանրակրթ-
ական դպրոցի խորհրդի նիստում
Վարման խորհրդի 2022թ-ի
օգոստոսի 31-ի կայացած
որոշմամբ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՌՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հաշվետվություն
ՀՀ Լոռու մարզի Ուռուտի միջնակարգ դպրոցի 2021-2022 ուստարվա
ուսումնադաստիարակչական աշխատանքների

ՀՀ Լոռու մարզի Ուռուտի միջնակարգ դպրոցը, որն ունի շուրջ 135 տարվա պատմություն, 2021-2022 ուստարում առաջնորդվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով: Ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցում:Այն նպատակաուղղված է եղել սովորողների աշխարհայացքի և անհատականության ձևավորմանը, ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության արմատավորմանը,ժողովրդավարական գործընթացների ամրապնդմանը:Ուստարվա սկզբին դպրոցում կոմպլեկտավորվել է 12 /տասներկու/ դասարան՝ 143/հարյուր քառասուներեք/ աշակերտով.

XII	դաս.՝-	9/ինը/	աշակերտ
XI	դաս.՝-	10 /տասը/	աշակերտ
X	դաս.՝-	9 /ինը/	աշակերտ
IX	դաս.՝-	7 /յոթ/	աշակերտ
VIII	դաս.՝-	13 /տասներեք/	աշակերտ
VII	դաս.՝-	12 /տասներկու/	աշակերտ՝ տարվա ընթ. ընդունվել է 1 աշ.
VI	դաս.՝-	14 /տասնչորս/	աշակերտ
V	դաս.՝-	12 /տասներկու/	աշակերտ՝ տարվա ընթ. ընդունվել է 1 աշ.
IV	դաս.՝-	15 /տասնհինգ/	աշակերտ
III	դաս.՝-	12 /տասներկու /	աշակերտ
II	դաս.՝-	16 /տասնվեց/	աշակերտ՝ տարվա ընթ. տեղափ. է 1 աշ.
I	դաս.՝-	14 /տասնչորս/	

Ուստարվա ավարտին դպրոցում սովորում են 145 /հարյուր քառասունհինգ/ աշակերտներ:

Ամբողջ ուստարվա ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել սովորողների առաջադիմության գնահատման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերման ուղղությամբ , ինչպես նաև արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքները…

Մանկավարժական կոլեկտիվը, դպրոցի տնօրինությունը զգալի աշխատանք են իրականացրել աշակերտների կրթադաստիարակչական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:Վաստակաշատ մանկավարժների կողքին այսօր աշխատում են մեր դպրոցի նախկին սաները, որոնց ներդրումը ևս մեր դպրոցի վարկանիշի բարձրացման գործում մեծ է: Ուսուցիչներ Հեղինե Այվազյանը, Հրաչուհի Այվազյանը, Բավական Այվազյանը հաջողությունների են հասել՝ դասավանդման պրոցեսում զանազան մեթոդներ ու հնարներ, ՏՀՏ միջոցներ կիրառելով:Հեղինե Այվազյանը զգալի աշխատանք

է իրականացրել դպրոցի կայքէջում տվյալների, ինչպես նաև էլեկտրոնային մատյաններում համապատասխան թեմատիկ պլանների մուտքագրման աշխատանքները բարձր մակարդակով կատարելու ուղղությամբ, լուսաբանել է դպրոցում կատարված բոլոր միջոցառումներն ու բաց դասերը՝ լուսանկարներ, տեղեկատվություններ տեղադրելով համապատասխան կայք էջերում: Նրա կատարած աշխատանքները,խորհրդատվություններն ու օգնություններն իր գործընկերներին անգնահատելի են դպրոցում բարձր մակարդակով ամենատարբեր աշխատանքներն իրականացնելու գործում... Տարբեր ուսումնական տարիներին նրա սաները հաղթող են ճանաչվել ամենատարբեր օլիմպիադաներում և մրցույթներում.մեծ և անգնահատելի է նրա կատարած աշխատանքը՝ դպրոցի տվյալների բազայի ստեղծման և թարմացման գործում: Հ. Այվազյանն ունի առաջին որակավորման տարակարգ...

Ուստարվա ընթացքում 10 /տասը/ ուսուցիչներ մասնակցել են <<Ինտերակտիվ կրթության զարգացում>>հիմնադրամի –ի կողմից կազմակերպված ուսուցիչների հերթական ատեստացիայի դասընթացներին:

Երիտասարդ, բանիմաց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Բավական Այվազյանի կողմից կազմակերպված բաց դասերը, բազմաթիվ ցերեկույթներն ու միջցառումներն ընդգրկել են դպրոցի գրեթե բոլոր սովորողներին՝ դպրոցի առօրյան դարձնելով չափազանց հետաքրքիր, անակնկալներով լի թե՛ աշակերտների համար, թե՛ մանկավարժական ողջ կոլեկտիվի համար:Նրա տքնաջան աշխատանքի արդյունքում դպրոցում անվանակոչվեցին երկու դասասենյակներ 44-օրյա պատերազմում զոհված մեր շրջանավարտների՝ Արթուր Ժամհարյանի և Վանիկ Խաչատրյանի անուններով:

Միջոցառմանը մասնակցեց գրեթե ողջ համայնքը, հրավիրված էին փոխմարզպետ Գ. Ասրյանը, Լոռու մարզի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Գրիգորյանը, զոհվածների հարազատները, հյուրեր,ուսուցիչներ, աշակերտներ...

Ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքներն հմտորեն իրականացվել և հսկվել են դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Անահիտ Զաքարյանի կողմից.

- Մատենավարություն՝ էլ. մատյանում մուտքագրման աշխատանքների վերահսկում
- Առարկայական թեմատիկ ծրագրերի կատարողականի ստուգում
- Տետրերի ստուգում /գրավոր թեմատիկ, կիսամյակային աշխատանքների կատարողականի ստուգում/
- ՏՀՏ-ների օգտագործումը դասերի ընթացքում
- Դասալսումներ, դասերի քննարկումներ , վերլուծումներ
- Մեթոդմիավորումների աշխատանքների հսկողություն
- Մեթոդական աշխատանքների կազմակերպում մանկավարժական անձնակազմի հետ

- Աշխատանք դասղեկների հետ
- Աշխատանք աշակերտների և ծնողների հետ…

Մանրակրկիտ վերլուծության է ենթարկվել աշակերտների գնահատումը: Դպրոցի ներքին գնահատման աշխատանքներն ընթացքի մեջ են: Այն սահմանված կարգով կքննարկվի դպրոցի միացյալ միացյալ կառավարման խորհրդի նիստում մինչև ս/թ սեպտեմբերի 05-ը և կտեղադրվի դպրոցի կայքում: Քննարկման ընթացքում վեր են հանվել կատարված աշխատանքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները, տրվել համապատասխան հանձնարարականներ, որոնք գալիք ուսումնարում կշտկվեն և կվերացվեն…

ՀՀ Լոռու մարզի Ուռուտի միջն. դպրոցի տնօրեն /Օհանյան Անուշ/